

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ՏՎՅԱԼ ՆԱԽԱԳԻԾԸ ԸՆԴԳՐԿՈՒՄ Է ՕԲՅԵԿՏԻ ԷԼ.ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ,
ԷԼ.ԼՈՒՄԱՎՈՐՄԱՆ,ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՆՈՒՑՄԱՆ ԳԾԱԳՐԵՐԸ:

ԸՍՏ ՀՈՒՄԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՕԲՅԵԿՏԻ ԷԼ.ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ
ԴԱՍՎՈՒՄ ԵՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ:

ՕԲՅԵԿՏԻ ԷԼ.ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱՑՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻՑ 2AA52λ 4X 150 ՏԻՊԻ ԿԱԲԵԼԱՅԻՆ ԳԾՈՎ:
1ՀԱՐԿՈՒՄ, ԷԼ.ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ ՍԵՆՅԱԿՈՒՄ,ՏԵՂԱԴՐՎՈՒՄ Է BPY-B1 ՏԻՊԻ ՆԵՐԱՆՑՄԱՆ ԲԱՇԽԻՉ
ՍԱՐՔ , ՈՐԻՑ ՍՆՎՈՒՄ ԵՆ ԳԼԽԱՎՈՐ ԲԱՇԽԻՉ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԸ:

ԳԼԽԱՎՈՐ ԲԱՇԽԻՉ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԱԳԻՍՏՐԱԼ ԳԾԵՐ ԵՆ ՏԵՂԱԿԱՅՎՈՒՄ ԴԵՊԻ ՇԵՆՔԻ
ԷԼ.ՍՊԱՌԻՉՆԵՐԸ, ԷԼ.ԼՈՒՄԱՎՈՐՄԱՆ և ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԸ:

ԷԼ.ՎԱՀԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՎԱՔՎՈՒՄ ԵՆ ՄՈՒՏՔԻ ԵՌԱՖԱԶ ԵՎ ԳԾԱՅԻՆ ՄԻԱՖԱԶ ԵՎ ԵՌԱՖԱԶ
ԱՎՏՈՄԱՏՆԵՐՈՎ ,ՈՐԻՑ ՍՆՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՁԻՆ ԳԾԵՐՈՎ ԷԼ.ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՐՈՑԱԿՆԵՐԸ, ՈՒԺԱՅԻՆ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ / ՆԱՅԻՐ ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԸ/:

ՄԱԳԻՍՏՐԱԼ ԳԾԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՈՅ ՄԱԿՆԻՇԻ
ԷԼ.ՀԱՂՈՐԴԱԼԱՐՈՎ PVC ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՊԱՏԻ ԿԱՄ ՀԱՏԱԿԻ ՄԵՋ :

ԷԼ.ԼՈՒՄԱՎՈՐՄԱՆ ՑԱՆՑԸ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՈՈՅ3X2.5 ՄԱԿՆԻՇԻ ԷԼ.ՀԱՂՈՐԴԱԼԱՐՈՎ, ՍՎԱՂԻ
ՇԵՐՏԻ ՏԱԿ ԹԱՔՆՎԱԾ,ԻՍԿ ՆԿՈՒՂՈՒՄ BBԴ3X2.5 ՄԱԿՆԻՇԻ ՄԱԼՈՒԽՈՎ, ԲԱՑ, ԵՐԿԱԹԱԿԱՊԵՐՈՎ :

ՆԵՐՔԻՆ ԲԱԿԻ ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է BBԴ4X6 ՄԱԿՆԻՇԻ ՄԱԼՈՒԽՈՎ :

ԲՈԼՈՐ ԷԼ.ԽՐՈՑԱԿՆԵՐԸ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԿՈՆՏԱԿՏՈՎ ԵՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ ;ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆՆԵՐԸ ՀԱՏԱԿԻՑ- 0.8մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ԽՈՀԱՆՈՑՈՒՄ - 1.2մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ
,ՄՆԱՑԱԾՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՀՐԴԵՀԻ ԴԵՊՔՈՒՄ ՕԴԱԺՈԽՈՒՅԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ԱՆՋԱՏՈՒՄ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ ԷՋՈՒՄ ՆՇՎԱԾ ԵՆ ՎԱՀԱՆԱԿՆԵՐԻ
ԱՎՏՈՄԱՏՆԵՐԻ ՆՈՄԻՆԱԼ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ,ԻՆՉԸ ՀՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ԸՆՏՐԵԼ ՄԱԿՆԻՇԸ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ, ՎԹԱՐԱՅԻՆ,ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

ԳԾԱԳՐԵՐՈՒՄ ՏՐՎԱԾ ԼՈՒՄԱԿԱԼՆԵՐԻ,ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԵՆ ԵՎ
ԿԱՐՈՂ ԵՆ ՓՈՓՈԽՎԵԼ ԸՍՏ ԴԻՋԱՅՆԵՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ,ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ
ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ,ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆԿԱՐԱԳԻՐԸ:

ՍԱՆ.ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԸ ,ԷԼ.ՏԱՔԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ,ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԷԼ.ՈՒԺԱՅԻՆ ՍՊԱՌԻՉՆԵՐԸ ՍՆՈՂ
ԲՈԼՈՐ ԽՄԲԵՐԻ ՎՐԱ ՏԵՂԱԴՐՎՈՒՄ ԵՆ Y30 ՊԱՇՏՊԱՆԻՉ ԱՆՋԱՏՄԱՆ ՍԱՐՔԵՐ 30մԱ ՀՈՍԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է TN-C-S ՏԻՊԻ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՍԻՍՏԵՄ: ԿՐԿՆԱԿԻ ՀՈՂԱՆՑՄԱՆ
ԿՈՆՏՈՒՐԸ ՀԱՎԱՔՎՈՒՄ Է 50X50X5 մմ, L=2.5 մ ԵՐԿԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՆԿՅՈՒՆԱՅԻՆ
ՊՈՂՊԱՏՈՎ,ՄԻԱՑՈՒՄՆԵՐԸ 40 X 4 ՇԵՐՏԱՊՈՂՊԱՏՈՎ: ՆԱԽԱԳԾԻ ԲՈԼՈՐ ԷԼ.ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՊՈՏԵՆՑԻԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ:ԴՐԱ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ՄՈՒՏՔԻ
ՍԱՐՔՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԳԼԽԱՎՈՐ ՀՈՂԱՆՑՄԱՆ ՇԻՆԱ, ՈՐԻՆ ՄԻԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ՀՈՂԱՆՑՄԱՆ
ԿՈՆՏՈՒՐԸ,ՋՐՈՅԱԿԱՆ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԳԻԾԸ (PE-N),ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀՈՂԱՆՑՄԱՆ ԳԻԾԸ (PE)
,ՋԵՌՈՒՑՄԱՆ,ԳԱՋԱՏԱՐԻ,ՋՐԱՏԱՐԻ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ,ՇԵՆՔԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՅԻ
ԱՄՐԱՆՆԵՐԸ: ԲՈԼՈՐ ԷԼ.ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՆԵՐՄԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՉ ՀՈՍԱՆՔԱՏԱՐ
ՄԱՍԵՐԸ ՀՈՂԱՆՑՎՈՒՄ ԵՆ:

	ՆՊՁ	Է.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	<< ԳԵՂԱՐՈՒՄԻՆԻ ՄԱՐԶԻ ՖՈՒԿԱՐ ԸԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՒՂԱՄՆ ՆԱՍԱԳԻՉ		
	ՆԱԽԱԳՐԵՑ Ի ՇՊԱԵԹՅԱՆ		ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ		
			ՓՈՒԼ	ԹԵՐԹ	ԹԵՐԹԵՐ
			ՄՆ	ԷՏ-2	16
ՏԱԿՐՈՒՄ ՍՊԸ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ <<< ԲԱՐԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾԻՊ >>> Դ<		ԲԱՑԱՏՐԱԳԻՐ:		